

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՈՒՄԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի (այսուհետ՝ Ակադեմիայի) Ուսանողական խորհուրդը (այսուհետ՝ ՈւԽ) ուսանողության ներկայացուցչական, ինքնակառավարման, նրա շահերը պաշտպանող ընտրովի մարմին է:
2. ՈւԽ-ն իր գործունեությունն իրականացնում է «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքի, Ակադեմիայի կանոնադրությանը, ներքին կարգապահական կանոններին և սույն կանոնադրությանը համապատասխան:
3. ՈւԽ-ը գործում է մշտական հիմունքներով սույն կանոնադրությամբ նախատեսված մարմինների միջոցով:
4. ՈւԽ-ն արտահայտում և պաշտպանում է ուսանողության շահերը, նպաստում նրանց կրթական, գիտական, ստեղծագործական, բարոյական և հոգևոր զարգացմանը:
5. ՈւԽ-ի լրիվ անվանումն է՝
 - 1) հայերեն՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի ուսանողական խորհուրդ
 - 2) ռուսերեն՝ Студенческий совет Академии Государственного Управления Республики Армения
 - 3) անգլերեն՝ Student Council of Public Administration Academy of the Republic of Armenia
6. ՈւԽ-ը կարող է ունենալ խորհրդանիշ, որի ձևը հաստատում է ՈւԽ-ի ժողովը:
7. Ակադեմիայի ՈւԽ-ի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կիևյան 8, ՀՀ պետական կառավարման ակադեմիա:

2. ՈՒՄԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

8. ՈւԽ-ի գործունեության նպատակները և խնդիրներն են՝
 - 1) պաշտպանել ուսանողների շահերն ու իրավունքները,
 - 2) ապահովել ուսանողների մասնակցությունը Ակադեմիայի կառավարման մարմիններում,

- 3) Ակադեմիայի կառավարման համապատասխան մարմինների քննարկմանը ներկայացնել ուսանողության շահերին առնչվող հարցեր,
 - 4) մասնակցել Ակադեմիայի ներքին կարգապահական կանոնների պահպանմանը՝ իրազեկելով ուսանողներին իրենց իրավունքների ու պարտականությունների մասին,
 - 5) մասնակցել ուսուցման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակմանն ու իրականացմանը,
 - 6) աջակցել ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը, կազմակերպել ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը,
 - 7) աջակցել ուսանողների գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման գործընթացին,
 - 8) միավորել Ակադեմիայի ՈւԽ-ի ջանքերը՝ ուսանողության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը նպաստելու և ուսանողների գիտական, կրթական, հոգևոր, մշակութային, ստեղծագործական ու ֆիզիկական զարգացումը խթանելու նպատակով:
9. Ուխ-ն իր գործունեության հիմնակետ է ընդունում սույն կանոնադրության 8-րդ կետով ամրագրված նպատակներն ու խնդիրները: Այն համագործակցում է ՀՀ-ում գործող բուհական, ուսանողական, երիտասարդական այլ կազմակերպությունների, ինչպես նաև այլ անձանց հետ՝ հիմք ընդունելով փոխհարաբերությունների կառուցման համագործակցության ու փոխշահավետության սկզբունքները:

3. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԸ ԵՎ ԿԱՄԱՎՈՐԸ

10. ՈւԽ-ի անդամների կազմը համալրվում է տարին մեկ անգամ մասնագիտական խմբերում՝ ուղղակի և բաց ընտրությամբ: Ընտրված են համարվում այն թեկնածուները, ովքեր հավաքել են առավել թվով ձայներ: Ընտրությունները համարվում են կայացած, եթե ներկա է մասնագիտական խմբի ուսանողների կեսից ավելին: Անդամներն ընտրվում են յուրաքանչյուր մասնագիտական խմբից՝ մինչև 20 ուսանողից բաղկացած խմբից ընտրվում է մեկ անդամ, 20-ից – 30-ի դեպքում՝ երկու, իսկ 30-ից ավելի ուսանողներ ունեցող խմբերում՝ երեք: Միննույն սեռի ներակայուցիչների թիվը չի կարող գերազանցել ՈւԽ-ի անդամների ընդհանուր թվի 2/3-ը: ՈւԽ-ի անդամը պետք է լինի Ակադեմիայի ուսանող և ուսումնական տարվա արդյունքներով ցուցաբերի բարձր առաջադիմություն: ՈւԽ-ի անդամի տեղը թափուր մնալու դեպքում յոթ ուսումնական օրերի ընթացքում անցկացվում է նոր ընտրություն:
11. Սույն կանոնադրության 10-րդ կետի դրույթները տարածվում են նաև հեռակա ուսուցման համակարգում սովորողների վրա:

12. ՈւՄ-ի աշխատանքներին կարող են ներգրավվել նաև կամավորներ, ովքեր իրենց ցանկությամբ մասնակցում են ՈՒՄ-ի աշխատանքներին, սակայն չունեն քվեարկության իրավունք:

4. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀԴԻ ԱՆԴԱՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

13. ՈՒՄ-ի անդամն իրավունք ունի՝

- 1) ընտրել և ընտրվել ՈՒՄ-ի նախագահ, մշտական հանձնաժողովի պատասխանատու, ՈՒՄ-ի կողմից ստեղծված ժամանակավոր հանձնաժողովի անդամ կամ պատասխանատու,
- 2) ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն ՈՒՄ-ի աշխատանքների և ղեկավար մարմինների գործունեության վերաբերյալ,
- 3) մասնակցել ՈւՄ-ի կողմից կազմակերպված միջոցառումներին,
- 4) ՈՒՄ-ի քննարկմանը ներկայացնել տարբեր հարցերի վերաբերյալ առաջարկություններ,
- 5) մասնակցել այն ժողովին, որտեղ քննարկվում է իրեն վերաբերող հարցը կամ առաջարկությունը, արտահայտել կարծիք քննարկվող հարցերի շուրջ,
- 6) իր դիմումի համաձայն դուրս գալ ՈւՄ-ից,
- 7) օգտվել Ակադեմիայի և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

14. ՈՒՄ-ի անդամը պարտավոր է՝

- 1) ենթարկվել Ակադեմիայի ներքին կարգապահական կանոններով հաստատված նորմերին,
- 2) գործել ՈՒՄ-ի կանոնադրությանը համապատասխան,
- 3) լինել ՈՒՄ-ի որևէ մշտական հանձնաժողովի անդամ,
- 4) կատարել Ակադեմիայի ղեկավարության և պաշտոնատար անձանց որոշումները և հանձարարականները, ինչպես նաև ՈՒՄ-ի ժողովի որոշումները,
- 5) օժանդակել ՈւՄ-ի հեղինակության և գործունեության ամրապնդմանը,
- 6) մասնակցել ՈՒՄ-ի ժողովներին և համապատասխան հանձնաժողովի նիստերին, ինչպես նաև ՈՒՄ-ի կողմից անցկացվող միջոցառումներին,
- 7) կատարել Ակադեմիայի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ պարտականություններ:

15. ՈՒՄ-ի անդամի լիազորությունները կարող են դադարեցվել հետևյալ դեպքերում՝

- 1) անձնական դիմումի համաձայն,
- 2) ՈՒՄ-ից հեռացվելու,
- 3) Ժողովի որոշմամբ՝ ժողովից պարբերաբար բացակայելու, աշխատանքից խուսափելու և ուսանողի պարտականությունները չկատարելու,

4) Ակադեմիայից հեռացվելու կամ Ակադեմիան ավարտելու դեպքերում:

5. ՈՒՄԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

16. ՈՒՄ-ի բարձրագույն մարմինն է ՈՒՄ-ի ժողովը (այսուհետ՝ ժողով): Ժողովին պարտավոր են մասնակցել ՈՒՄ-ի բոլոր անդամները: Ժողովը վարում է ՈՒՄ-ի նախագահը: Ժողովն իրավագոր է, եթե մասնակցում են ՈՒՄ-ի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Ժողովի կողմից որոշումներն ընդունված են համարվում, եթե կողմ են քվեարկել ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությունը:

Ժողովի արդյունքներն ամփոփվում են արձանագրությամբ, որտեղ նշվում է ժողովի օրակարգը, մասնակիցների թիվը, քննարկվող հարցերի բովանդակությունը, որոշումները և քվեարկության արդյունքները: Արձանագրությունը ստորագրում է ՈՒՄ-ի նախագահը և քարտուղարը:

17. ՈՒՄ-ի նախագահի ընտրությունը կատարվում է բաց քվեարկությամբ, ընտրությանը մասնակցում են ՈՒՄ-ի անդամները: Ընտրված է համարվում այն թեկնածուն, որի օգտին քվեարկում են ներկաների կեսից ավելին: Անհրաժեշտ ձայներ չհավաքելու դեպքում առավելագույն ձայներ ունեցող երկու թեկնածուները անցնում են 2-րդ փուլ: 2-րդ փուլում ընտրվում է այն թեկնածուն, ում օգտին քվեարկել են ներկաների հարաբերական մեծամասնությունը: ՈՒՄ-ի նախագահը ընտրվում է մեկ տարի ժամկետով:

18. ՈւՄ-ի նախագահը՝

- 1) կազմակերպում և համակարգում է ՈՒՄ-ի գործունեությունը,
- 2) ընդունում է որոշումներ սույն կանոնադրությամբ նախատեսված իր լիազորությունների շրջանակներում,
- 3) ներկայացնում է ՈւՄ-ն Ակադեմիայի գործող կառավարման մարմիններում
- 4) ներկայացնում է ՈՒՄ-ի գործունեության մասին տարեկան հաշվետվություն մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 20-ը, այդ թվում՝ ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ:
- 5) հայտարարում է բանավոր նկատողություն ՈՒՄ-ի անդամի կողմից սույն կանոնադրության պահանջները չկատարելու դեպքում,
- 6) ՈՒՄ-ի ժողովի օրակարգ է ընդգրկում ՈՒՄ-ի անդամի վերաբերյալ հարցեր,
- 7) պարզևատրում է ՈՒՄ-ի պատվոգրով ՈՒՄ-ի անդամին կամ Ակադեմիայի այլ ուսանողին՝ ՈՒՄ-ի կողմից կազմակերպված տարբեր միջոցառումներին ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար:

19. ՈՒՄ-ի խորհրդակցական մարմիններն են ՈՒՄ-ի մշտական հանձնաժողովները: Մշտական հանձնաժողովները ստեղծվում և լուծարվում են ժողովի որոշմամբ: ՈւՄ-ի

հանձնաժողովների թիվը չի կարող գերազանցել 8-ը: Մշտական հանձնաժողովները ձևավորվում են բացառապես ՈԻԽ-ի անդամներից: Անհրաժեշտության դեպքում ՈԻԽ-ի մշտական հանձնաժողովի նիստին կարող են մասնակցել նաև կամավորներ նախագահի թույլտվությամբ: ՈւԽ-ի յուրաքանչյուր անդամ կարող է ընդգրկվել մի քանի հանձնաժողովներում բայց, ոչ ավելի քան՝ երեքում: Հանձնաժողովի պատասխանատուներն ընտրվում են ՈԻԽ-ի անդամների կողմից, հաշվի առնելով նրանց մասնագիտությունը, անձնային հատկանիշները և այլ տվյալներ: Հանձնաժողովի պատասխանատուները իրենց գործունեության վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնում են մայիս և դեկտեմբեր ամիսներին մինչև համապատասխան ամսվա 15-ը:

20. ՈԻԽ-ի անդամների 1/3-ի կողմից կարող է բարձրացվել ՈԻԽ-ի նախագահի վստահության հարցը:
21. ՈԻԽ-ի փոխնախագահի և քարտուղարի թեկնածությունները կարող են առաջադրվել ՈԻԽ-ի նախագահի կողմից: Վերջիններս ընտրվում են ՈԻԽ-ի Ժողովի կողմից ձայների պարզ մեծամասնությամբ:

6. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

22. ՈԻԽ-ի ֆինանսական միջոցները գոյանում են Ակադեմիայի կողմից տրամադրվող արտաբյուջետային միջոցներից, ինչպես նաև այլ իրավաբանական անձանց կողմից հատկացված հանգանակություններից, նվիրատվություններից, ՀՀ Ակադեմիայի կանոնադրությանը, սույն կանոնադրությանը չհակասող և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:
23. ՈԻԽ-ի գույքը և դրամական միջոցները տնօրինում է Ժողովը՝ Ակադեմիայի կանոնադրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:
24. ՈւԽ-ի նախագահը պարտավոր է յուրաքանչյուր տարի մինչև դեկտեմբեր 20-ը Ակադեմիայի գիտական խորհուրդ ներկայացնել հաշվետվություն՝ ՈԻԽ-ի կողմից իրականացված ծրագրերի, միջոցառումների և սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության այլ ձևերի անցկացման, ինչպես նաև ՈԻԽ-ի ֆինանսական միջոցների գոյացման և տնօրինման մասին:

7. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏԱՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

25. ՈԻԽ-ի անդամները, այդ թվում ՈԻԽ-ի նախագահը ենթակա են կարգապահական պատասխանատվության՝ սույն կանոնադրության 26-րդ կետով նախատեսված դեպքերում:

26. ՈւՖ-ի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու դեպքերն են՝
- 1) Ակադեմիայի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ նախատեսված պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը,
 - 2) ՈւՖ-ին հատկացված դրամական միջոցները վատնելը կամ ոչ նպատակային օգտագործելը,
 - 3) Ակադեմիայի ղեկավարության հանձարարությունը չկատարելը կամ թերի կատարելը,
 - 4) ՈւՖ-ի անդամին ոչ վայել վարքագիծ դրսևորելը,
 - 5) Ակադեմիայի ներքին կարգապահական կանոններով նախատեսված այլ դեպքերում:
27. ՈւՖ-ի անդամները կարող են պարզևատրվել իրենց առջև դրված պարտականությունները և հանձարարությունները ժամանակին և պատշաճ կատարելու համար:

8. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

28. ՈւՖ-ն դադարեցնում է իր գործունեությունը Ակադեմիայի կանոնադրությամբ նախատեսված այլ դեպքերում:
29. ՈւՖ-ի լիազորությունները կարող են ժամանակավորապես դադարեցվել Ակադեմիայի գիտական խորհրդի կամ ՈւՖ-ի անդամների 2/3-ի հիմնավորված որոշմամբ:
30. ՈւՖ-ն իր լիազորությունների ժամանակավոր դադարեցման մասին որոշումը պարտավոր է ներկայացնել Ակադեմիայի գիտական խորհրդին, այն ընդունելուց հետո անմիջապես, իսկ անհնարինության դեպքում՝ երկօրյա ժամկետում:

9. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ, ՓՈՓՈԽՈՒՄԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄԸ

31. ՈւՖ-ի կանոնադրությունը ընդունվում է Ժողովի կողմից ձայների պարզ մեծամասնությամբ:
32. ՈւՖ-ի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու նախաձեռնությամբ կարող են հանդես գալ ՈւՖ-ի նախագահը և ՈւՖ-ի անդամների ընդհանուր թվի մեկ երրորդը: Փոփոխությունները և լրացումները ընդունվում են Ժողովի կողմից ձայների պարզ մեծամասնությամբ:
33. ՈւՖ-ի կանոնադրությունը, ինչպես նաև առաջարկվող փոփոխությունները և լրացումները ենթակա են հաստատման Ակադեմիայի գիտական խորհրդի կողմից:

10. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

34. Սույն կանոնադրությունն ուժի մեջ է մտնում Ակադեմիայի գիտական խորհրդի կողմից հաստատման պահից:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

**ՀՀ պետական կառավարման ակադեմիայի
գիտական խորհրդի 2013 թվականի նոյեմբերի 29-ի
նիստում (արձանագրություն N 110)**